ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

3

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

368
Ա-67

Հրատարակություն
Ադրբեջանի Արհմիությունների Խորհրդի խմբագրա-հրատարակչական բաժնի

Բաքու, 1925 թ.

13 FEB 2013

1 MAR 2010

ԵՊՐԻՆՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

300
2693-ՀՈ
368
Ա-67

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

1003
12890

Հրատարակություն

Ադրբեջանի Արխիվությունների Խորհրդի խմբագրահրատարակչական բաժնի։

Բաքու, 1925 թ.

43729

Азлит 3480. Зак. № 1727. -Тир. 5.000 экз.
2-я Гостипогр. Азполиграфтреста ВСНХ.

ԲԱԳՎԻ ՍՈՑԻԱՊԴՐԱՄԱՐԿԴԻ ՆԱԽԱԳԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Խորհրդային օրենսդրության Սոցիալական Ապահովության ընդհանուր կետերի հետ ծանոթ է ամեն մեկ վարձու բանվոր և ծառայող։ Ներկայումս չկա համարյա վոչ մի ընտանիք, վորը այսպես թե այնպես առնչություն չունենա Ապահովագրական Դրամարկի կամ Սոցիալական Ապահովագրության ուրիշ որգանների հետ։ Ամեն մի բանվոր և ծառայող գիտե, վոր Սոցիալական Ապահովագրությունը նրան ոգնում է համարյա թե բոլոր դեպքերում, յերբ նրան վորևե դժբախտություն է պատահում։ Բայց ամենքը լավ չեն իմանում, թե գործնականապես ինչպես իրականացնեն իրենց իրավունքները՝ Սոցիալական Ապահովագրության Դրամարկղից ոգնություն ստանալու դեպքում։

Տեղեկատուի կարիքը, վորի մեջ ավելի կամ պակաս չափով մանրամասնորեն ցույց տրվեր թե ինչպիսի դեպքերում, ինչպիսի հանգամանքներում

և ինչպիսի վավերաթղթեր (դոկումենտներ) են պետք ներկայացնելու Սոցապդրամարկղին՝ այս կամ այն տեսակ նպաստ կամ թոշակ ստանալու համար՝ առանց վորևե դժվարությունների—չափազանց շատ են։

Բացի Սոցապդրամարկղի նախագահությունը հույս ունի, վոր սուն «Հուշատետրի» հրատարակումով, այդ կարիքը վորոշ չափով բավարարված կլինի։

Այս «Հուշատետրը» գլխավորապես աչքի առաջ ունի մասսայական բանվորին, վորը նրա մեջ կը գտնի այն ցուցմունքները, թե ինչպես առանց դժվարությունների, արագ կերպով ստանա Ապահովագրության Դրամարկղից իրեն հասանելիք նպաստը։

Բացսոցապդրամարկղի նախագահությունը շատ շնորհակալ կլինի այն ընկեր-բանվորներից, վորոնք ցույց կըտան այն պակասություններն ու թերություններն, վորոնք, նրանց կարծիքով, կան այս «Հուշատետր»-ի մեջ։

Բացսոցապդրամարկղի նախագահություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂ

Ներկայումս գոյություն ունեցող Խորհրդային որենքներով յուրաքանչյուր քաղաքում, վորտեղ կան գործարաններ, ֆաբրիկներ և ուրիշ զանազան ձեռնարկություններ և հիմնարկություններ, կազմակերպվում են Սոցիալական Ապահովագրության Դրամարկղներ,

Այն տեղերում, վորտեղ չկան շատ ֆաբրիկներ և գործարաններ, սակայն կան—թեև վոչ այնքան շատ քանակով—վարձու աշխատող բանվորներ և ծառայողներ, յուրաքանչյուր Ապահովագրական Դրամարկղ, կան Ապահովագրական կամ Ապահովագրական Դրամարկղի վճարման կայաններ։ Քիչ թվով բանվորներ և ծառայողներ ունեցող վայրերում լինում են Ապահովագրական Դրամարկղի լիազորները։

Այդպիսով Խորհրդային Ֆեդերացի-

այն բոլոր անկյուններում, վորտեղ կան վարձով աշխատող բանվորներ և ծառայողներ, կան Սոցիալական Ապահովագրության Դրամարկղի կազմակերպությունները կամ լիազորները։

ՈՎ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ.

Ապահովագրական Դրամարկղները կառավարում են բանվորների և ծառայողների կողմից ընտրված ներկայացուցիչները։ Այդ ներկայացուցիչները ընտրվում են ֆաբրիկների, գործարանների, տեղկոմների և հանքկոմների մեջմիութենական կոնֆերանսում, վորը հանդիսանում է Ապահովագրական Դրամարկղի լիազոր տերը։

Այդ կոնֆերանսում ընտրվում է «Ապահովագրական Դրամարկղի Կոմիտե», վորը և կազմակերպում է թոշակներ ու նպաստներ հատկացնելու կարգը, և զբաղվում Ապահովագրական Դրամարկղի մյուս գործերով։

«Ապահովագրական Դրամարկղի Կոմիտե»-ի տարած աշխատանքների հաշվետվության վրա հսկելու համար՝ կոնֆերանսում ընտրվում է վերատուգիչ հանձնաժողով, վորը վորևե անճշտություն նկատած դեպքում, առաջարկում է ուղղել այն կամ հրավիրում է ֆաբրիկների, գործարանների և հանքկոմների նոր կոնֆերանս, «Դրամարկղի Կոմիտե»-ի վերընտրությունների համար։

Ով է համարվում ապահովագրված.

Յուրաքանչյուր մի անձնավորություն, վոր աշխատում է վարձով տրվյալ քաղաքում կամ շրջանում, անկախ նրանից, թե ում մոտ է ծառայում, տիրոջ մոտ կամ ֆաբրիկայում, գործարանում, արհեստանոցում, դրասենյակում թե հիմնարկության մեջ, հաշվում է ապահովագրված։

Ամեն մի անհատ հենց վոր մտնում է գործի, հաշվում է ապահովագրված՝ անկախ նրա ցանկությունից։

Ով է վճարում Սոցիալական Ապահովագրության Դրամարկղին

Սոցիալական Ապահովագրության Դրամարկղի միջոցները կազմված են այն գումարներից, որոնք մացնում են իրենց մոտ աշխատող բանվորների և ծառայողների համար ձեռնարկություն ների տերերը, և ֆաբրիկների, գործարանների ու հանքերի վարչություն ները։

Բանվորների և ծառայողների աշխատավարձից վոչինչ չի վերցնվում Սոցիալական Ապահովագրության Դրամարկղի ոգտին։

Ձեռնարկությունները և հիմնարկությունները—Ապահովագրական Դրամարկղը վճարներ են մացնում իրենց հաշվով։

Ինչ նպաստներ է տալիս բանվորներին յեվ ծառայողներին Ապահովագրության Դրամարկղը։

Սոցիալական Ապահովագրության

Դրամարկղը տալիս է հետեվյալ նպաստները.

1. Նպաստ—հիվանդության դեպքում։
2. Նպաստ—քարանտինի դեպքում։
3. Նպաստ—ընտանիքի հիվանդացած անդամին խնամելու դեպքում։
4. Նպաստ—բանվորուհիների և ծառայող կանանց հղիության և ծննդաբերության դեպքում։
5. Նպաստ—նորածնի խնամելու (բաժինքի) համար։
6. Նպաստ—նորածնի սննդի համար։
7. Նպաստ—թաղման համար։
8. Թոշակ—աշխատանքի հաշման դաժներին։
9. Թոշակ—աշխատանքի մյուս բոլոր անկարներին։
10. Թոշակ—աշխատանքի հաշմությունից մահացած բանվորների ծառայողների ընտանիքներին։

11. Թոշակ — զանազան պատճառներով մահացած կամ անհետ կորած բանվորների և ծառայողների ընտանիքներին։

12. Նպաստ — գործազրկության դեպքում։

Ի. ՈՎ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հիվանդության դեպքում նպաստի իրավունք ունի ամեն մի բանվոր կամ ծառայող, վոր հիվանդացել և գործի ժամանակ։ Նպաստը տրվում է միայն դրամարկղի այն անդամին, վորին Առողջաժնի բժիշկը ճանաչել և վորպես հիվանդ և աշխատանքից ազատել է։ Յեթե հիվանդը բժիշկի տված ազատ որերը աշխատում է, նա վոչ մի նպաստ չի կարող ստանալ։

Ինչպես ստանալ ազատություն աշխատանքից հիվանդության դեպքում.

Հիվանդության դեպքում կարելի է աշխատանքից ազատություն ստանալ

միայն Առողջաժնի բժշկից։ Հիվանդացած աշխատավորին անհրաժեշտ է անմիջապես դիմել բուժարանի բժշկին, վորը և վորոշում է՝ կարիք ունի հիվանդը ազատության թե վոչ։ Բժիշկը իրավունք ունի աշխատանքից ազատել 9 որից վոչ ավելի։ Հիվանդության 9 որից հետո, յեթե աշխատավորը չի առողջացել, բժիշկը նրան ուղղում է Բժշկական-Վերատուչիչ Հանձնաժողովը, վորը հաստատում է հետագա ազատության անհրաժեշտությունը՝ հիվանդության պատճառով և տալիս է այնպիսին։

Ինչ չափով է տրվում նպաստը հիվանդության դեպքում.

Հիվանդության դեպքում նպաստը տրվում է հիվանդության ամսի նախորդ յերկու ամիսների՝ հիվանդի միջին աշխատավարձի չափով։ Իսկ յեթե հիվանդը մինչև հիվանդանալը չի աշխատել լրիվ յերկու ամիս, այդ դեպքում նպաստը նրան տրվում է նույն

կատեգորիայով աշխատավորի տարիքի համաձայն։

Հիվանդի փաստացի աշխատավարձը հաշվում է պայմանաժամից դուրս ժամերով և աշխատավարձի մյուս տրվյալներով միասին։

Վորքան ժամանակով է տրվում նպաստը հիվանդության ժամանակ։

(ԱԳԱՀՈՎՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ)

Հիվանդության դեպքում նպաստը տրվում է այն որվանից, յերբ հիվանդը դադարել է աշխատելուց և ստացել է Առողջապահության բժշկից ազատություն, մինչև նրա առողջանալը կամ թե մինչև վոր բժիշկները նրան չեն գտնի անկար (կանգուն աշխատանքի անընդունակ)։ Այն ժամանակ նրան տալիս են թոշակ՝ վորպես աշխատանքի ինվալիդի։

Հիվանդության դեպքում նպաստը տրվում է միայն այն բաց թողած աշխատանքի որերի համար, վորի համար

բժիշկը տվել է ազատություն։ Տոների և այն որերի համար, վորը բանվորը աշխատել է, նպաստ չի տրվում։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել Ապահովագրության Դրամարկղին հիվանդության դեպքում նպաստ ստանալու համար։

1. Հիվանդության թերթը (հիվանդանոցի թերթ), վորը տալիս է բուժարանի բժիշկը և վորի վրա պետք է նշանակված լինի հիվանդանալու որը և աշխատանքից ազատված որերի քանակը։

2. Հիվանդության թերթը հիվանդը տալիս է ձեռնարկության դրասենյակին, վորը նշանակում է նրա վրա, յերբ է հիվանդը դադարել աշխատելուց, յերբվանից է նրա ռոճիկ տալը դադարեցրված, վորքան է հիվանդը աշխատել մինչև հիվանդանալու յերկու ամիսները, քանի որ է աշխատել նա այդ վերջին 2 ամիսների ընթացքում

և վորքան և նույն կատեգորիայով աշխատավորների տարիֆային ռոճիկը։

3. Հիվանդության թերթի վրա պիտի լինի ձեռնարկության վարչության ստորագրությունն, կնիքը, նույնպես և գործկոմի կամ տեղկոմի նախագահի ստորագրությունն ու կնիքը։

4. Ապահովագրության Դրամարկղի տված ապահովագրվածի ապահովագրական գրքույկը։

II ՆՊԱՍՏ ՔԱՐԱՆՏԻՆԻ ԴԵՊՔՈՒՄ

Ինչպիսի հանգամանքներում է տրվում նպաստը քարանտինի դեպքում.

Յերթե աշխատավորի ընտանիքում վորև է մեկը հիվանդանում է վարակիչ հիվանդությունով (կարմրուկ, դիֆտերիտ, սքարլատին) և վորպեսզի հիվանդությունը չտարածվի, այդպիսի դեպքերում բժիշկները պատվիրում են գործի չգնալ (քարանտին)։

Քարանտինի դեպքում բժիշկը պարտավոր է տալ ապահովագրվածին հիվանդության թերթը կամ վկայական, վորի մեջ ցույց է տրված թե ինչ պատճառով է հաստատված քարանտինը և վորքան ժամանակով։

Քարանտինի դեպքում նպաստը տրվում է նույն կարգով, ինչպես և հիվանդության դեպքում և նույն քանակով այն բոլոր որերի համար, վոր ապահովագրվածը չի աշխատել և ստացել է բժիշկից ազատություն՝ քարանտինի պատճառով։

Ինչ դոկումենտներ են հարկավոր ներկայացնել՝ քարանտինի դեպքում նպաստ ստանալու համար.

1. Հիվանդանոցի թերթը կամ բժիշկի տեղեկագիրը՝ վորքան ժամանակ է ապահովագրվածը յեղել քարանտինում և ինչ պատճառով։

2. Ձեռնարկության տեղեկագիրը՝ ապահովագրվածի մինչև քարանտինի պատճառով արձակուրդ ստանալը վերջին 2 ամսվա իրականորեն աշխատավարձի չափի մասին։

3. Ապահովագրվածի ապահովագրական գրքույկը։

III ՆՊԱՍՏ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴԱՑԱԾ ԱՆԴԱՄԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ինչ հանգամանքներում է տրվում նպաստը խնամելու դեպքում.

Խնամելու դեպքում նպաստը տրվում է այն ժամանակ, երբ ապահովագրվածի ընտանիքի վորևե անդամը ծանր հիվանդանում է և բացի ապահովագրվածից ուրիշ վոչ վոք չկա հիվանդին խնամելու համար։

Այդպիսի դեպքում ապահովագրվածը իրավունք ունի ստանալու մի քանի որով արձակուրդ (մինչև հիվանդին հիվանդանոց տեղափոխելը) Առողջապահության բժշկող բժշկից։

Խնամելու դեպքում նպաստը տրվում է նույն չափով, ինչպես և հիվանդության դեպքում այն որերի համար, վոր ապահովագրվածը համառձայն բժշկի պատվերին չի գնացել գործի, այլ խնամել է հիվանդին։

Ինչ դոկումենտներ են հարկավոր ներկայացնել խնամելու դեպքում նպաստ ստանալու համար.

1. Հիվանդության թերթը կամ Առողջապահության բժշկի տեղեկագիրը հետևյալ տեղեկություններով՝ թե յերբ է հիվանդացել ընտանիքի անդամը, ինչ հիվանդությունով, հիվանդին առանց խնամքի չթողնելու անհրաժեշտությունը, և վորքան ժամանակ է ապահովագրվածը խնամել ընտանիքի ծանր հիվանդացած անդամին։

2. Միլիցիայի կամ Գյուղխորհրդի վկայականը, թե իրավ ապահովագրվածի ընտանիքում, բացի իրանից ուրիշ չափահաս անդամ չկա, վորը կարողանա հիվանդին խնամել։

3. Ձեռնարկության տեղեկագիրը՝ ապահովագրվածի 2 ամսվա աշխատավարձի մասին, յերբ է նա դադարել աշխատելուց, վոր ժամանակից է դադարեցրած նրան ռոճիկ տալը և յերբ է նա նորից գործի յեկել։

1 003 / 1989

4. Ապահովագրված ի ապահովագրական գրքույկը կամ նրան փոխարինող մի ուրիշ գոկումենտ։

IV ՆՊԱՍՏ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂ ԿԱՆԱՆՑ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ով ունի իրավունք այդ նպաստը ստանալու.

Հղիության և ծննդաբերության դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեն միայն բանվորուհիները և ծառայող կանայք։

Բանվորների և ծառայողների կանայք այդ նպաստը ստանալու իրավունքը չունեն։

Հղիության և ծննդաբերության դեպքում ստանալիք նպաստը տրվում է ապահովագրված ի լրիվ աշխատավարձի չափով, ինչպես և հիվանդության դեպքում։

Վորքան ժամանակ է տրվում նպաստը հղիության յեվ ծննդաբերության դեպքում.

Ֆիզիկական աշխատանքի բոլոր բանվորուհիները, հղիության և ծննդաբերության դեպքում, նպաստ են ստանում 8 շաբաթվա համար՝ մինչև ծննդաբերությունը, և 8 շաբաթվա համար՝ ծննդաբերությունից հետո։

Ծառայող կանայք նպաստ են ստանում, 6 շաբաթվա համար՝ ծննդաբերությունից առաջ, և 6 շաբաթվա համար՝ ծննդաբերությունից հետո։

Ծառայող կանայք վորոնց աշխատանքը շատ է ծանր, ծննդաբերության և հղիության դեպքում նպաստ են ստանում ֆիզիկական աշխատանքի բանվորուհիներին հավասար, այսինքն 8 շաբաթ մինչ ծննդաբերությունն և 8 շաբաթ ծննդաբերությունից հետո։

Ահա այդ ծառայող կանանց ցուցակը.

1. Հեռախոսի կայանների կին ծա-

ռայողները (տելեֆոնիստները)։

2. Հեռագրատան կին ծառայողները (տելեգրաֆիստները)։

3. Մանկաբարձուհիները։

4. Գթութեան քույրերը։

5. Մասաժիստները։

6. Հոգեկան հիվանդներին խնամող և հոգեբուժական բաժանմունքներում աշխատող բժշկուհիներ, ֆելդշերուհիներ և վիրակապուհիները։

7. Տներում ոգնություն հասցնող գյուղական շրջիկ բաժնի, տեղափոխվող խմբերի, վիրաբուժական և վարակիչ հիվանդանոցների և բաժանմունքների ու մանկաբարձական հիմնարկությունների բժշկուհիներն ու ֆելդշերուհիները։

8. Խորհրդային բուժարանների տատանաբույժերը։

9. Մանկատների, պարտեզների, քոլոնիաների, դեֆեկտիվ յերեխաների տներում և ռեֆորմատորիաներում աշխատող ղեկավարուհիները և դաստիարակչուհիները։ Գյուղդպրոցների

ուսուցչուհիները։ I և II աստիճ. գիշերոթիկ դպրոցների դաստիարակչուհիները, ֆիզիկական կրթության հրահանգչուհիները և բանտերում կուլտկրթական աշխատանքներ տանող անձնավորությունները։

10. Դրամայում, օպերայում, բալետում և կրկեսում, բեմի վրա անմիջապես դուրս յեկող դերասանուհիները։

11. Բոլոր կանայք, վորոնք մշտական դիշերային աշխատանքով են զբաղված։

12. Այն անձնավորությունները, վորոնք տանում են հրահանգչական՝ տեսչական աշխատանքներ՝ կապված մշտական տեղափոխումների հետ։

13. Դեղագործ-կանայք հետևյալ կոչումների՝—ոգնականուհիներ (աստիստենտ) ֆասովշչիցա, I օգնական (լաբորանտկա), դեֆեկտոր և պուլտրանտ։

14. Գրող մեքենաների վրա աշխատող կանայք։

Ինչպես արձակուրդ ստանալ հղիության յեվ ծննդաբերության դեպքում:

Հղիության և ծննդաբերության դեպքում արձակուրդ ստանալու համար հարկավոր է ժամանակին դիմել Առողջապահության մասնագետ բժշկին, որը վորոշում է հիվանդության ժամանակաշրջանը և ուղարկում ապահովագրված Ապահովագրության Դրամարկղի բժշկական-վերատեսուչ հանձնաժողովին:

Հանձնաժողովը վորոշում է հղիության և ծննդաբերության համար արձակուրդի ժամանակաշրջանը, համաձայն գոյություն ունեցող կանոնադրության և տալիս է հղի կնոջը հիվանդանոցի թերթ՝ համապատասխան դիտողություններով արձակուրդի ընկերզի և վերջանալու մասին:

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել հղիության յեվ ծննդաբերության դեպքում նպաստ ստանալու համար:

1. Հիվանդության թերթը, վորի

մեջ պիտի նշանակված լինի հղիության 7-րդ ամսի վերջը, իսկ ծննդկան կանայք—նորածնի մետրիկը:

2. Տեղեկագիր ձեռնարկությունից 2 ամսվա աշխատավարձի և աշխատանքի ու ռոճիկ տալը դադարեցնելու մասին: Տեղեկագրի փոխարեն այդ տվյալները կարելի է նշանակել հիվանդության թերթի համապատասխան աղյուսակում:

3. Հիվանդի ապահովագրական գրքույկը կամ փոխարինող դոկումենտ:

V՝ ՆՊԱՍՏ ՆՈՐԱԾՆԻ ԲԱԺԻՆՔԻ ՀԱՄԱՐ

Ով ունի իրավունք ստանալու այդ նպաստը:

Նորածնի համար բաժինք գնելու նպաստ ստանալու իրավունք ունեն.

ա.—Բոլոր բանվորուհիները և ծառայող կանայք:

բ.—Բանվորների և ծառայողների կանայք:

գ.—Ապահովագրության Դրամարկղից թոշակ ստացող աշխատանքի անկար կանայք (ինվալիդկանները)։

դ.—Ապահովագրական Դրամարկղից թոշակ ստացող աշխատանքի անկարների (ինվալիդների) կանայք։

յե.—Վախճանված բանվորների և ծառայողների այրիները, որոնք չեն ամուսնացել և թոշակ են ստանում Ապահովագրության Դրամարկղից։

զ.—Անգործության համար նպաստ ստացող անգործ կանայք։

է.—Անգործության համար նպաստ ստացող անդամների կանայք։

Յերեխայի համար բաժինք գնելու նպաստը տրվում է միանվագ, ծննդաբերությունից մի ամիս առաջ։

Յերկվորյակներ ծնվելու դեպքում նպաստը տրվում է յուրաքանչյուր մանկանը առանձին։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել բաժինք գնելու նպաստը ստանալու համար.

1. Վկայական, որ ծննդականը ա-

պահովագրված է կամ ապահովագրվածի ընտանիքի անդամ է։

2. Վկայական մանկան հոր ծառայության տեղից կամ ապահովագրության գրքույկը։

3. Բուժարանի բժշկի կամ կոնսուլտացիայի տեղեկագիրը, թե որ ժամանակ է յենթադրվում ծննդաբերությունը։

VI ՆՊԱՍՏ ՆՈՐԱԾՆԻ ՍՆՈՒՆԴԻ ՀԱՄԱՐ

Մանկան սնունդի համար նպաստ ստանալու իրավունք ունեն բոլոր այն կանայք, որոնք ստանում են նպաստ բաժինքի համար (տես այս հուշատետրի V գլ.)։

Սնունդի նպաստ տրվում է ամեն ամիս, մինչև յերեխայի 9 ամիս լրանալը։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել նորածնի սնունդի նպաստը ստանալու համար.

1. Մանկան ծննդականը (մետրիկա-

կան) ЗАГС-ից կամ սահմանած տոմսը Ապահովագրության Դրամարկղից։

2. Մանկական կոնսուլտացիայի տեղեկագիրը, որը յերեխան կենդանի է։

3. Ապահովագրության գրքույկը կամ ուրիշ դոկումենտներ, որ վկայում է թե տվյալ անձնավորությունը ապահովագրված է կամ ապահովագրված ի ընդանիքի անդամ է։

Ծանոթություն. 1) Յեթե ծննդկանը նպաստի իրավունք չի ունեցել, բայց հետո նա ստացել է այդ իրավունքը (ապահովագրվել է) և յերեխայի 9 ամիսը դեռ չի լրացել, նա մանկան սննդի համար ստանում է նպաստ այդ իրավունքը ստանալու մոմենտից մինչև 9 ամիսը։

2. Բանվորի և ծառայողների կանայք, որոնք ապրում են աշխատավորի ծառայության տեղից հեռու, ստանում են հիշյալ նպաստը իրենց ապրած տեղերում։

3. Այն կանայք որոնք ծննդաբերության սկզբում ունեցել են մանկան մասն դի նպաստը ստանալու իրավունք, բայց հետո կորցրել են այդ իրավունքը, շարունակում են ստանալ նպաստը մինչև յերեխայի 3 ամիս լրանալը։

VII ՆՊԱՍՏ ԹԱՂՄԱՆ ՀԱՄԱՐ

Ով ունի իրավունք ստանալու այդ նպաստը.

Թաղման համար նպաստը տրվում է հետևյալ անձնավորությունների մահվան դեպքում.

1. Ապահովագրված բանվորների և ծառայողների։

2. Ապահովագրվածի ընտանիքի աշխատանքի անընդունակ անդամների։

3. Աշխատանքի ինվալիդների, որոնք թոշակ են ստանում Ապահովագրության Դրամարկղից և նրանց ընտանիքների աշխատանքի անընդունակ անդամների։

4. Վախճանված բանվորների և ծառայողների ընտանիքների անդամները, որոնք թոշակ են ստանում Ապահովագրական Դրամարկղից։

5. Նպաստ ստացող անդամները և նրանց ընտանիքի աշխատանքի անընդունակ անդամները։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել թաղման նպաստ ստանալու համար.

1. Ապահովագրության գրքույկը կամ վախճանվածի բանվոր, ծառայող կամ ինվալիդ լինելը վկայող դոկումենտը։

2. ՅԱԳՏ-ի մեռելիկական վկայականը մահվան մասին։

3. Ընտանիքի անդամի թաղման համար բացի այդ հարկավոր է ներկայացնել միլիցիայի կամ դյուղխորհրդի տեղեկագիրը, որ վախճանվածը աշխատանքի անընդունակ էր և ապահովագրվածի ընտանիքի անդամ։

4. Վկայական, որ թաղումը կատարված է սեփական հաշվով և ոչ թե հիմնարկության կամ կազմակերպության հաշվով։

VIII ԹՈՇԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ով իրավունք ունի ստանալու թոշակ աշխատանքից վնասվելու դեպքում.

Աշխատանքից վնասվելու դեպքում թոշակ ստանալու իրավունք ունեն այն բանվորները և ծառայողները, որոնք վնասվել են աշխատանքից կամ աշխատանքի հետ կապ ունեցող ուրիշ հանգամանքներում և որոնց բժշկական-եկսպերտիզայի հանձնաժողովը ճանաչել է որպես ինվալիդների։

Վնասված-ինվալիդների թոշակի չափը կախված է նրանից, թե քանի տոկոս է կորցրած աշխատանքի ընդունակությունը։

Վնասված ինվալիդների առաջին խմբակին՝ թոշակը տրվում է նրա իսկական աշխատավարձի չափ։

Վնասված ինվալիդների յերկրորդ խմբակին՝ թոշակը տրվում է նրա լրիվ աշխատավարձի $^{3}/_{4}$ չափ։

Վնասված ինվալիդների յերրորդ խմբակին՝ թոշակը տրվում է նրա լրիվ աշխատավարձի չափ։

Մինչև 1924 թվի յունվարի 1-ը վնասված ինվալիդների թոշակը հաշվում է վոչ թե նրանց սեփական աշխատավարձից, այլ նրա այժմյան ընակության տեղում աշխատող բանվորների միջին աշխատավարձից։

Մինչև 1924 թվի յունվարի 1-ը վնասված ինվալիդները թոշակը ստանում են նույն չափով, այսինքն՝ I խմբակ—լրիվ միջին աշխատավարձ (ընակության վայր), II խմբակ ¾ աշխատավարձի և VI խմբակ—կեսը։

Վնասված ինվալիդների թոշակը տրվում է դիմում տալու օրից մինչև մահը, յեթե այդ ժամանակամիջոցում նա աշխատանքի ընդունակ չե դառնում։

Ինչ դոկումենտներ է հարկավոր ներկայացնել վնասված ինվալիդներին թոշակ ստանալու համար։

1. Ապահովագրության Դրամարկղի տված վորոշ ձևի դիմում։

2. Վկայական՝ ծառայության տեղից։

3. Դժբախտ դեպքի վավերագիրը կամ նրա պատճենը։

4. Ջեռնարկության գրասենյակի տեղեկագիրը աշխատավորի մինչև դժբախտության դեպքի վերջը 3 ամսվա աշխատավարձի չափի մասին։

IX ԹՈՇԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՅՈՒՍ ԻՆՎԱԼԻԴՆԵՐԻՆ

Ինվալիդության համար թոշակ ստանալու իրավունք ունեն.

1. Բանվորները և ծառայողները, վորոնք անկարացել են վոչ աշխատանքի հետ կապ ունենալով։

2. Բանվորները և ծառայողները, վորոնք անկարացել են ընդհանուր հիվանդություններից։

3. Բանվորները և ծառայողները, որոնք անկարացել են ծերության պատճառով, սակայն աշխատել են վերջին ժամանակները ոչ պակաս 8 տարուց։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել ինվալիդության դեպքում թոշակ ստանալու համար.

1. Վկայական վերջին ծառայության կամ աշխատանքի տեղից, կամ աշխատավարձի գրքույկը։

2. Դոկումենտներ, որոնք վկայելիս լինեն, որ բանվորը կամ ծառայողը վերջին 8 տարին վարձով ծառայել է (վկայականներ, աշխատավարձի գրքույկներ և այլն)։

3. Առողջության բժշկի վկայականը, որ նա գտնում է բանվորին կամ ծառայողին աշխատանքի անընդունակ։

4. Դիմում Ապահովագրական Դրամարկղին։

Ծանոթություն. Եթե ինվալիդը այդպիսի դոկումենտներ չունի, նա Ապահովագրական գանձարանին պետք է դիմում տա, որպեսզի աշխատանքի փորձնական ժամանակաշրջանը (ստաժը) որոշող հանձնաժողովը նրան վկայական տա, որ բան որքը վերջին 8 տարին աշխատել է։

Այդ դիմումը կարելի է ստանալ Ապահովագրական Դրամարկղից։

X ԹՈՇԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱՀԱՑԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ.

Եթե բանվորը կամ ծառայողը վախճանվել է աշխատանքի, կամ աշխատանքի հետ կապ ունեցող պայման ներում ստացած հաշմություններից, նրա ընտանիքին տրվում է թոշակ։

Այդ թոշակը ստանալու իրավունք ունեն վախճանվածի ընտանիքի հետևյալ անդամները.

1. Աշխատանքի անընդունակ ծնողները։

2. Աշխատանքի անընդունակ կինը կամ մարդը։

3. Անչափահաս յերեխաները՝ 16 տարեկանից փոքր։

4. Անչափահաս (16 տարեկանից փոքր) քույրերը և յերեխաները, յեթե վերջիններրը ապրում են վախճանվածի հաշվով։

5. Վերև հիշած ընտանիքի այն անդամները, վորոնք թեև աշխատանքի ընդունակ են, բայց ունեն իրենց մոտ յերեխաներ մինչև 8 տարեկան հասակը։

Աշխատանքի վնասից մահացածի ընտանիքին տրվելիք թոշակի չափը կախված է մեռած աշխատանքի անընդունակ անդամների թվից։

Յեթե վախճանվածից հետո մնացել է միայն մի անդամ աշխատանքի անընդունակ, այն ժամանակ նրան տրվում է մեռածի լրիվ աշխատավարձի մի յերրորդ (1/3) մասը։

Յեթե վախճանվածից հետո մնացել է ընտանիք՝ բաղկացած 2 աշխատանքի անընդունակ անդամներից, նրանց տրվում է վախճանվածի լրիվ աշխատավարձի կեսը։

Իսկ յեթե վախճանվածից հետո մնացել են յերեք կամ ավելի աշխատանքի անընդունակ անդամներ կամ անչափահասներ, այն ժամանակ նրանց տրվում է վախճանվածի լրիվ աշխատավարձի յերեք քառորդ (3/4) մասը։

Վնասման ժամանակ է տրվում թոշակը հաշմությունից մահացածի ընտանիքին.

Հաշմությունից մահացածի ընտանիքին նպաստը տրվում է.—

1. Անչափահասներին—մինչև 16 տարեկան հասակը։

2. Աշխատանքի անընդունակներին—յեթե նրանք մինչ այդ աշխատանքի ընդունակ չեն դառնա։

3. Աշխատանքի ընդունակները, վորոնք իրենց մոտ ունեն 8 տարեկանից փոքր յերեխաներ—մինչ յերեխաների 8 տարին լրանալը։

Ինչ դոկումենտներ պետք է ներկայացնել աշխատանքի հաշմությունից մահացածի ընտանիքին թոշակ ստանալու համար։

1. Դիմում (վորը կարելի է սա-

նալ Ապահովագրության Դրամարկղում։

2. Վկայական վախճանվածի վերջին ծառայության տեղից։

3. Դժբախտ դեպքի վավերագիրը կամ նրա պատճենը.

4. Առողջապահության բժշկի կամ հիվանդանոցի վկայականը, որ մահը տեղի է ունեցել հաշմություններից։ (Եթե այդ մասին գիտություն չի արված վավերագրում)։

5. Մահվան մետրիկը (ՅԱՐՏ-ից)։

6. Մինչև 16 տարեկան հասակը յերեխաների մետրիկները։

7. Ծնողները, յերեխաները և քույրերը, բացի այդ, պետք է ներկայացնեն միլիցիայից կամ գյուղխորհրդից վկայական, որ նրանք ապրելիս են յեղել վախճանվածի հաշվին։

XI ԹՈՇԱԿ ՁԱՆԱՁԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ. ՄԱՀԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Յեթե մեռել կամ անհետ կորել է

բանվորը կամ ծառայողը և նրա մահվանից հետո ընտանիքը է մնացել, այն ժամանակ այդ ընտանիքին Ապահովագրության Դրամարկղը թոշակ է տալիս։

Վախճանվածի կամ անհետ կորածի ընտանիքի անդամներ են հաշվում, աշխատավորի հաշվով ապրող հետևյալ անձնավորությունները.

1. Աշխատանքի անընդունակ ծնողները և կինը կամ մարդը։

2. Անչափահաս յերեխաները, յեղբայրները և քույրերը (մինչև 16 տարեկան)։

3. Ընտանիքի այն անդամները, որոնք թեև աշխատանքի ընդունակ են, բայց իրենց մոտ ունեն յերեխաներ մինչև 8 տարեկան հասակը (կինը)։

Այդպիսի ընտանիքներին տրվելիք թոշակի չափը կախված է նրանից, թե վախճանվածից կամ անհետ կորածից հետո մնացած ընտանիքը քանի հոգուց է բաղկացած։

Աշխատանքի անընդունակ մի ան-

դամից բաղկացած ընտանիքին տրվում է թոշակ՝ հավասար տվյալ տեղի մինչին աշխատավարձի մի յերրորդ մասը (1/3)։

Աշխատանքի անընդունակ յերկու անդամից բաղկացած ընտանիքին տրվում է թոշակ՝ հավասար տվյալ տեղի մինչին աշխատավարձի կեսին (1/2)։

Աշխատանքի անընդունակ կամ անչափահաս 3 կամ ավելի անդամներից բաղկացած ընտանիքին տրվում թոշակ՝ հավասար մինչին աշխատավարձի յերկու յերրորդական մասը (2/3)։

Թոշակը տրվում է՝

1. Անչափահասներին—մինչև 16 տարեկան հասակը։

2. Աշխատանքի անընդունակներին—ցմահ, յեթե մինչև այդ ընդունակությունը չվերականգնվի։

3. Աշխատանքի ընդունակներին, վորոնք իրենց մոտ ունեն փոքր յերեխաներ՝ մինչև նրանց 8 տարին լրանալը։

Ինչ դոկումենտներ են հարկավոր ներկայացնել ընդհանուր պատճառներից մահացած կամ անհետ կորած բանվորների յեվ ծառայողների ընտանիքներին թոշակ ստանալու համար։

1. Դիմում (վորը կարելի է ստանալ Ապահովագրության Դրամարկղում)։

2. Վկայական վախճանվածի կամ անհետ կորածի վերջին ծառայության տեղից կամ նրա աշխատավարձի գրքույկը։

3. Միլիցիայից կամ գյուղխորհրդից վկայական, վոր ընտանիքը ապրելիս է յեղել վախճանվածի կամ անհետ կորածի հաշվին։

4. Յերեխաների մեթրիկները։

5. Աշխատավորի մահվան մետրիկան կամ ժողովրդական դատավորի վկայականը, վոր աշխատավորը անհետ կորել է։

XII ՆՊԱՍՏ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Անգործության դեպքում նպաստ ստանալու իրավունքով ոգավում են անգործ բանվորները ու ծառայողները, վորոնք ցուցակագրված են Աշխատանքի Բորսայում և ապրելու վոչ մի միջոց չունին.

ա) Վորակված աշխատավորները, վորոնք ստանալիս են յեղել վոչ պակաս 6-րդ կարգից (17-րդ կարգի տարիֆային ցանց) և բարձր վորակման մտավոր աշխատավորները, վորոնք ունին մասնագիտություն (ինժիներներ, բժիշկներ, մանկավարժներ և այլն)։

բ) Չվորակված բանվորները, վորոնք արհմիության անդամ են, և մինչև անգործ մնալը աշխատել են անընդհատ մի տարի։

գ) Չվորակված բանվորները, վորոնք արհմիության անդամ չեն, սակայն մինչև անգործ մնալը աշխատել են անընդհատ 3 տարի։

դ) Արհմիության անդամ ծառայողները, վորոնք մինչև անգործ մնալը աշխատել են անընդհատ 3 տարի։

յե) Այն ծառայողները, վորոնք արհմիությունների անդամ չեն, բայց մինչև անգործ մնալը ծառայել են անընդհատ 5 տարի։

զ) Անչափահասները, մինչև 18 տարեկանը, վորոնք մինչև անգործությունը վարձով աշխատել են՝ անկախ աշխատանքի փորձնական ժամանակաշրջանի (ստաժի)։ Անչափահասները, մինչև 16 տարեկանը, յեթե նրանք գործի են մտած յեղել Աշխատանքի Տեսչի թույլտվությամբ։

ե) Ապախաղացված (демобилизованные) և ժամանակ աղատված կարմիր բանակայինները և կարմիր նավատիները, յեթե նրանք անմիջապես մինչև զինվորական

ծառայությունը վարձով աշխատել են, անկախ աշխատանքի սատժից։

Ծանոթություն 1. Տնային անգործ աշխատավորները և աշխատավորուհիները հավասարվում են չվարակված բանվորներին։

Ծանոթություն 2. Աշխատանքի փորձնական ժամանակաշրջանը (սատժը) հաշվում է անընդհատ այն դեպքում, եթե ընդհատումը տեղի է ունեցել անգործության պատճառով, հաստատված համապատասխան դոկումենտներով։

2. Անգործության համար նպաստ ստանալ կամեցող աշխատավորը, վերջին աշխատանքից զրկվելու որից վոչ ուշ քան յերեք ամսվա ընթացքում, գրավոր դիմում է տալիս այդ առթիվ Ապահովագրության կամ վճարման կայանին։

3. Անգործության դեպքում նպաստը տրվում է դիմումը տված որից, վոչ շուտ այն որից, մինչև վոր աշխատավորը վարձատրվել է գործից հեռանալու ժամանակ։

4. Նպաստը անգործության դեպքում ունի տևողության 9 ամիս՝ վարակված աշխատավորների համար և 6 ամիս՝ մյուս բոլորի համար։

5 Եթե անգործությունը տևում է մի տարուց ավելի, նպաստի վճարումը նորոգվում է նույն ժամանակով անգործության հաջորդ տարվա սկզբից։

6. Անգործության նպաստի վճարումը սկզբից արգելվում է. վճարումը տեղի է ունենում ամիսը մի անգամ անցած ժամանակի համար։

Ծանոթություն. Եթե անգործը բնակության տեղը փոխում է մի ուրիշ քաղաք, նպաստը կարող է ստանալ մի ամսվա համար սկզբից։

7. Ցերեխաներին խնամելու և սնունդի համար լրացուցիչ նպաստ ստանալու իրավունքով ոգտվում են թե իրենք անգործները, վորոնք անգործության համար նպաստ են ստանում և թե նրանց կանայք՝ մյուս ապահովագրվածների հետ հավասար։

8. Անգործների և նրանց ընտանիքի անդամների թաղման համար նպաստը տրվում է մյուս բոլոր ապահովագրվածների հետ հավասար։

Ինչ դոկումենտներ է հարկավոր ներկայացնել աշխատության դեպքում նպաստ ստանալու համար.

1. Աշխատավարձի գրքույկը կամ վերջին ծառայության տեղից վկայական՝ հետևյալ դիտողություններով. 1) պաշտոնը և արհեստը, 2) գործից հեռանալու ժամանակը, 3) մինչև վոր ժամանակն է անգործը բավարարված աշխատավարձով և արձակման նպաստով, 4) վերջին աշխատության ժամանակաշրջանը, 5) ռոճիկի կարգը և վերջին ամսվա աշխատավարձի գումարը։

2. Համապատասխան աշխատանքի փորձնական անընդհատ ժամանակաշրջանը հաստատող դոկումենտները։

3. Անցագիր կամ հավատապատասխան վկայական միլիցիայից։ Արհմիությունների անդամները կարող են ներկայացնել իրենց արհմիութենական անդամության տոմսերը։

Ով ունի իրավունք ապրելու աշխատավորի հաշվով.

ՎԱՐՁՈՎ ՉԱՇԽԱՏՈՂ.

1. Կինը, յեթե նա պարապում է տան գործերով։

2. Ապահովագրվածի յերեխաները մինչև 16 տարեկան հասակը։

3. Աշխատանքի անընդունակ ծնողները։ Վերջին հանգամանքը վորոշում է բժշկական եկսպերտիզան։ 60 տարեկանից ավելի հայրը և 55 տարեկանից ավելի մայրը հաշվում են աշխատանքի անընդունակ՝ առանց եկսպերտիզայի։

4. Քույրերը և յեղբայրները մինչև 16 տարեկանը, յեթե վորը են կամ ունեին աշխատանքի անընդունակ ծնողներ։

5. Աշխատանքի անընդունակ քույրերը և յեղբայրները 16 տարեկանից

ավելի՝ յեթե վոր ենն, կամ ունին աշխատանքի անհրաժեշտ ծնողներ, վորոնք ընդունակություն կարցրել են մինչև հիշյալ ժամանակը։

Ինչի համար կարելի է զրկել թոշակից կամ նպաստից։

Դրամարկղը ունի իրավունք զրկել թոշակից կամ նպաստից հետևյալ դեպքերում.

Հիվանդության նպաստը սահմանում դեպքում.—*Յեթե բժշկի պատվերները չկատարեն՝ հիվանդանոց կամ բուժարան հաճախելու վերաբերյալ։ Յեթե հիվանդը այնպիսի աշխատանքներ ատի, վորոնք կարող կլինեն խանգարել բժշկության ընթացքին։*

Թոշակը տալու ժամանակ.—*Դրամարկղը կարող է մերժել աշխատանքի ինվալիդին (բայց վոչ ՀԱՍՍՎԱԾԻՆ կամ ՀԱՍԱՍԻՑ մահացած աշխատավորի ընտանիքի անդամներին) յեթե նա գտնի, վոր այդպիսին բավականին միջոցներ ունի ապրելու առանց թոշակի։*

Անգործության նպաստը տալու ժամանակ.—*Անգործը կարող է զրկվել նպաստը ստանալուց.*

1. Յեթե պարզվի, վոր նա ապրելու միջոցներ ունի։

2. Յեթե նա առանց հարգելի պատճառների չի ներկայացել բորսային նշանակված որերը և հաշվից հանված է։

3. Յեթե անգործը առանց հարգելի պատճառի հրաժարվել է Աշխատանքի Բորսայի առաջարկած աշխատանքից։

4. Յեթե պարզվի, վոր անգործը իր մասին տվել է Դրամարկղին իրականությունը չհամապատասխանող տեղեկություններ, վորի հիման վրան Դրամարկղը նրան սխալմամբ նպաստ է նշանակել։

Ուր կարելի է դիմել զանգատով թոշակը կամ նպաստը մերժելու դեպքում։

Դրամարկղը թոշակը կամ նպաստը մերժելու դեպքում՝ կարելի է զանգատ

տալ Աղրբեջանի Սոցիալական Ապահովագրության Վարչության կից Կոնֆլիկտային Հանձնաժողովին։

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻՆ

Ամեն մի ապահովագրված, նույնպես և նրա ընտանիքի անդամները իրավունք ունեն ձրի բժշկական և դեղորայքի օգնության։

Բժշկական օգնությունը հասցնում են Առողջբաժնի հիվանդանոցներն ու ամբուլատորիաները, իսկ դեղորայքային օգնությունը—Առողջբաժնի դեղատները՝ ամբուլատորիաների բժիշկների դեղատոմսերով։

Գոյություն ունեցող օրենքներով, —բժշկության և դեղորայքային օգնության ամբողջ գործը գտնվում է Առողջբաժնի տնօրինության ներքո։

Ապահովագրության Դրամարկղի բժշկության օգնության համար ստացած գումարները ամբողջովին տրվում են Առողջբաժնին միայն նրա ընդարձակման և բարելավման՝ ապահովագրվածների համար։

Ապահովագրվածներին բժշկական օգնություն ցույց տալու գործում Ապահովագրամարկղը չի խառնվում, այլ նրան վերապահված է միայն այդ օգնության վերահսկողությունը։

Սոցապդրամարկղը իր վերահսկողությանը իրականացնում է Առողջբաժիններին կից Ապահովագրական Խորհրդակցություններում մասնակցելով։ Ապահովագրական Խորհրդակցությունների մեջ մասնակցում են Ապահովագրական Դրամարկղը և Արհմիությունները՝ հանձին իրենց ներկայացուցիչների։

Առողջբաժնին կից Ապահովագրական Խորհրդակցությունները մշակում են ապահովագրվածների բժշկական օգնության նախագծերն ու նախահաշիվները։

Ապահովագրվածներին իր ժամանակին ճշգրիտ բժշկական օգնություն

ցույց տալու գործում պատասխանատու են Առողջբաժինները, և վոչ թե Ապահովագրական Դրամարկղները։

ՑՈՒՑԱԿ

Բազմի գործկոմի քաղաքողջբաժնի բժշկա-սանիտարական հիմնարկությունների։

1. Հիվանդանոց Ազիզբեկովի անվան—Տատարսկայա 88, հեռ. 6-39:

2. «Շուտափույթ ոգնություն» քաղաքային բաշխման կայան,—Բալախանսկայա և Տատարսկի անկյուն, Ազիզբեկովի անվան հիվանդանոցի տուն, հեռախոս 21-08։

3. Սուբ-վարակիչ հիվանդանոց Սեմաշկոյի անվան—Հայկավան, Նախկին 19 լաղարետ, հեռ. 31-69,—Սեմաշկոյի անվան հիվանդանոց, հեռ. 45-34։

4. Հիվանդանոց—Պաստերի անվան Բալախանսկի փող., հեռ. 42-02:

5. Աչքի հիվանդանոց — Զեմբերեքենդ. 6-րդ Կոմունիստական տուպիկ, հեռախոս 26-05։

6. 1-ին հոդերբուժական հիվանդանոց—Մոգաղիննայա 50, հեռ. 10-40։

7. Թոքախտավորների սանատորիա, Կրուպսկու անվան—Բայիրով, 11-82։

8. Գիշերային սանատորիա—8-րդ Կանիթափինսկայա 60, 27, 29, հեռախոս 23-74։

9. Լենինի անվան գործարանին կից հիվանդանոց—Զրխ, հեռ., 1-17։

10. 1-ին բուժարան—Կրասնի և Զեմբերեքենդսկի անկյուն 5, հեռախոս 13-83։

11. 2-րդ բուժարան—Մուստաֆա Սուբխի փող. Պաչտովայա № 15/45, հեռախոս 13-81։

12. 3-րդ բուժարան—Կուբինսկայա 6, հեռ. 13-84։

13. Վենեբեռիկների դիսպանսեր—Բոլշայա-Մոբսկայա 71, հեռ. 3-13։

14. 5-րդ Խորհ. բուժարան Բալախանսկայա շոսսե 137, հեռ. 13-82։

15. 7-րդ Խորհ. բուժարան—Արմենիքենդ 6 Պերեվալ, հեռ. 10-33.

16. 8-րդ Խորհ. բուժարան—1-ին Բայիլովսկայա 35, հեռ. 40-81։

17. 9-րդ բուժարան. Թոք. դիսպանսեր № 1—Բաղարայա 14, հեռ. 1-43։

18. Թոք. դիսպանսեր № 2—փող. Նարոդով Վաստակա, հեռ. 13-86։

19. Կենտրոնական պոլիկլինիկա—Բ.-Մորսկայա 10, հեռ. 7-13։

20. Յերեխաների 11դ բուժարան—Ալի-Բայրամովի և Գիմնազիչեսկայա փ. № 17/143, հեռախոս 29-24։

21. 1-ին ելեքտրո-ջրա-լուսա-բուժարան—Ազիզբեկովի փողոց 17։

22. 2-րդ ելեկտրո-ջրա-լուսա-բուժարան—Շահուժյան փ. 5, հեռ. 41-18։

23. Ամբուլատորիա Ժողկապի—Շահումյան փող. 37, հեռ. 23-67։

24. Ամբուլատորիա Ալի-Բայրամովի ակումբին կից—Պերսիդսկայա և Զինովիևի փող. անկյուն։

25. Բուժական կայան, Կարմիր Հոկտեմբեր ծխախոտագործարանին կից—Կրասնովոդսկի և Բոնդարևի փ. անկյուն։

26. Բժշկական-վերահսկիչ հանձնաժողով—Կասում Իզմայիլովի փող. 5, հեռախոս 24-66։

27. Ամբուլատորիա № 1 Ուղղիչ տան կից—Բայիլով։

28. Ամբուլատորիա № 2 Ուղղիչ տան կից—Շեմախինկա։

29. Հիվանդանոց Աղչեկային կից—Կոոպերատիվի 21։

Հանիա-գործարանային ռայոն։

30. Սև Քաղաքի հիվանդանոց և ամբուլատորիա Շահումյանի անվան—Սև քաղաք, հեռ. 11-07 և 37։

31. Բինադադի Աչար Մելիքի անվան հիվանդանոց և ամբուլատորիա—Բինադադի, հեռ. 1-50։

32. Սաբունչի Զափարիձեյի անվան հիվանդանոց և ամբուլատորիա—Սաբունչի, հեռ. 4-47։

33. Սպիտակ քաղաքի ամբուլատորիա—Սպիտակ քաղաք, հեռ. 3-07:

34. Քիշլիի բժշկական կայան—Քիշլի (հայկական):

35. Շուբանի բժշկական կայան—Շուբանի:

36. Բիբի-Հեյբաթի ամբուլատորիա—Բիբի-Հեյբաթ, հեռ. 7—35:

37. Ռամանիի բժշկական կայան—Ռամանի:

38. Սուբախանու ամբուլատորիա—Սուբախանի, հեռ. 7:

39. Արաեմի կղզու ամբուլատորիա—Արաեմի կղզի:

40. Քիշլիի բուժական — Քիշլի (մուսուլմանական):

41. Զբխի բուժական Զբխ:

42. Գուտայի բուժական—Գուտա կայարան:

43. Ռամանու ամբուլատորիա—Ռամանի, հեռ. 1-32:

44. Զաբրատի բժշկական կայան—Զաբրատ:

45. Բալախանիի ամբուլատորիա—Բալախանի, հեռ. 45:

Գավառում.

46. Մարդաքյանի հիվանդանոց—Մարդաքյան:

47. Մաշտաղու հիվանդանոց—Մաշտաղի:

48. Խիզինի բժշկական կայան—Խիզի:

49. Սարայի բժշկական կայան—Սարայ գյուղ:

50. Նոր-Քիշլիի բժշկական կայան—Քիշլի:

51. Թյուրքիանի բժշկական կայան—Թյուրքիան կայարան:

52. Ալթի-Աղաչի բժշկական կայան—Ալթի-Աղաչ կայարան:

53. Բինայի բժշկական կայան—Բինա կայարան:

54. Կոբիի բժշկական կայան—Կոբի կայարան:

Մանկության յեվ մայրության պաշտպանության յենթաբաժին։

1. *Ծծկեր մանկան տուն—Նարեբեժնայա (Գուբանովա)* 39, *հեռ.* 8-78։

2. *Մանկական կոնսուլտ. «Մի կաթիլ կաթ» Սուրբխանովայա և Ազիզբեկովի անկյուն* № 130/151, *հեռախոս* 6-18։

3. *Մանկական կոնսուլտ. 8 ըդ բուժարանին կից, հեռ.* 40-81։

4. *Մանկական կոնսուլտ. Սև Քաղաքի հիվանդանոցին կից, հեռ.* 11-07։

5. *Մանկական կոնսուլտ. Սաբունչու հիվանդանոցին կից, հեռ.* 4-47։

6. *Մասուր* № 1—*Պերսիդսկայա և Զինովիևի անկյուն։*

7. *Մասուր* № 2—*Կրասնովոդսկի և Պրոլետարսկի անկյուն։*

8. *Մասուր* № 4—*Ռեմեսլենի* 25։

9. *Մասուր* № 3 *Զաբրատում—Զաբրատ (հրապարակի դիմաց)։*

10. *Բաշխիչ-Կոլեկտոր—Պրոլետար. և Բ. Մորսկոյ անկյուն, հեռ.* 19-06։

Դավառում.

11. *Թոքախտ.-դպրոցական սանատորիաներ—Մարդաքյան։*

12. *Մանկական կենտրոնական մեկուսացման վայր—Մարդաքյան։*

Սանիտարական-համանարակային յենթաբաժին։

13. *Սանիտարական լուսավորության տուն—Արմյանսկի և Բալախանսկի անկյուն* 36, *հեռ.* 6-29։

14. *Ախտահանիչ կայարան և մեք. լվացարան—Պերսիդսկի և 5-ըդ Պարալել. անկյուն, հեռ.* 6-34 *և* 20-69։

15. *Քաղաքային սանիտարական կայարան—Կասում Իզմայիլովի* № 5, *հեռախոս* 24-66։

16. *Սանիտարական կայան* 1 *և* 2 *քաղաքամասի—Գուբանովի փող.* 51, *հեռ.* 18-57։

17. Սանիտ. կայան 3 և 4 քաղաքամասի — Շեմախինսկ. և 1-ին Գարալել. անկյուն, հեռ. 49-87։

18. Սանիտ. կայան 5, 6 և 7 քաղաք. — Կարդանովի փ. 15, հեռ. 3-06։

19. Սանիտարական կայան 8 և 9 քաղաքամասի 1-ին Կանիթափինսկ. և Նարոդով Վաստոկա 195, հեռ. 8-41։

20. Լենինյան շրջանի սանիտարական կազմակերպություն — Սաբունչի։

21. Բիբի-Հեյբաթի սանիտարական կազմակեպ. — Բիբի-Հեյբաթ։

22. Գործարանային շրջանի սանիտար. կազմակերպ. — Սև քաղաք։

ՀՈՒՇԱՏԵՏՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

1. Բաղասպրամարկղի նախագահությունից 3
2. Ով և կառավարում Սոց. Ապահովագրութ. Դրամարկղը 6
3. Ով ե համարվում ապահովագրվածը 7
4. Ով ե վճարում Սոցիալական Ապահովագրութ. Դրամարկղին 8
5. Ինչ նպաստներ ե տալիս Սոց.-ապդրամարկղը 8
6. Նպաստ հիվանդության դեպքում 10
7. Նպաստ քարանտինի դեպքում 14
8. Նպաստ ընդանիքի հիվանդ ան-

դամի խնամելու դեպքում . 16
9. Նպաստ հղիության և ծննդաբերության դեպքում . . . 18
10. Նպաստ նորածնի բաժինքի համար 23
11. Նպաստ նորածնի սնունդի համար 25
12. Նպաստ թաղման համար . . 27
13. Թոշակ աշխատանքից վնասված-ինվալիդներին 29
14. Թոշակ աշխատանքի այլ ինվալիդներին 31
15. Թոշակ աշխատանքի հաշմուելությունից մահացած բանվորների և ծառայողների ընտանիքներին 33
16. Թոշակ զանազան պատճառներով մահացած կամ անհետ կորած բանվորների ու ծառայողների ընտանիքներին . 36

17. Նպաստ անգործության դեպքում 40
18. Ով ունի իրավունք ապրելու աշխատավորի հաշվով . . . 45
19. Ինչի համար կարելի է գրկել թոշակից կամ նպաստից . . 46
20. Ուր կարելի է գանգատվել թոշակը կամ նպաստը մերժելու դեպքում 47
21. Բժշկական ոգնության ապահովագրվածներին 48
22. Աղբսոցապի բժշկա-սանիտարական հիմնարկութ. ցուցակ 50

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

յեղած բոլոր գրքերը. կարելի է ձեռք բերել

ԱԶՄԽ-ի ԽՄԲԱԳՐԱ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ

„ТРУД И ЗНАНИЕ“

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱԼԱՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0213774

43.729

ՀՐԲ